ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N 629-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց Երևան քաղաքի բյուջեով նախատեսված համապատասխան գումարներից տրամադրել ամսական դրամական փոխհատուցում 45000-ական ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի չափով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական փոխհատուցումը ավագանու անդամներին է տրամադրվում.

1) առանց ավագանու անդամների կողմից իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման,

2) դրամական փոխհատուցում ստանալու ցանկության վերաբերյալ ավագանու անդամի դիմումի հիման վրա, որը ներկայացվում է Երեւանի քաղաքապետարանի

աշխատակազմի քարտուղարին, ավագանու անդամի՝ իր լիազորությունների ստանձնումից հետո, մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը,

3) անկանխիկ, յուրաքանչյուր ամիս՝ մինչեւ հաջորդող ամսվա 10-ը,

4) 2013 թվականի հուլիսի 1-ից,

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) 2013 թվականի հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների դրամական փոխհատուցման գումարները վճարվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2013 թվականի հոկտեմբերի 10-ը ներառյալ,

2) ավագանու անդամին տվյալ ամսում դրամական փոխհատուցում չի վճարվում, եթե նա այդ ամսվա ընթացքում բացակայել է Երևանի ավագանու և մշտական հանձնաժողովի բոլոր նիստերից, որոնք հրավիրվել են նստաշրջանի ընթացքում,

3) սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված բացակայությունները հիմնավորվում են՝ ավագանու մշտական հանձնաժողովների նախագահների՝ հանձնաժողովի նիստերին ավագանու անդամների մասնակցության մասին տեղեկանքներով՝ և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից վարվող ավագանու նիստին մասնակցած ավագանու անդամների հաշվառման մասին տվյալներով, որոնք ներկայացվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչեւ հաջորդ ամսվա 5-ը ներառյալ:

4. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի «Դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» N 629-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ **ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի №629-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևանի ավագանու անդամներին՝ իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց, դրամական փոխհատուցման վճարման կարգը և ժամկետները: Ընդ որում՝ նախատեսվում է վճարումները կատարել յուրաքանչյուր ամիս՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին ներկայացված նրա դիմումը, որն ավագանու անդամը ներկայացնում է ընդամենը մեկ անգամ՝ իր լիազորությունների ամբողջ ժամանակաշրջանի համար:

Որոշման նախագիծը նախատեսում է նաև այն դեպքերը, երբ տվյալ ամսում ավագանու անդամը կարող է զրկվել դրամական փոխհատուցումից, այն է՝ եթե նա, այդ ամսվա ընթացքում, ընդհանրապես չի մասնակցել ավագանու կամ այն հանձնաժողովի նիստերին, որի կազմում նա ընդգրկված է, ինչպես նաև այդ բացակայությունների հիմնավորման կարգը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N 629-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դրամական փոխհատուցում տրամադրելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի N 629-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել ու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N 629-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Դրամական փոխհատուցում տրամադրելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի N629-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել ու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ՝ ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ